

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ  
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վահան Հովհաննիսյանի, Արծվիկ Մինասյանի, Արտյուշ Շահբազյանի, Ռուզաննա Առաքելյանի և Արա Նոանյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Ներկայացված նախագծով առաջարկվում է եկամտահարկով հարկման նպատակով համախառն եկամտի տարր չհամարել գիտական կոչում ունեցող անձանց տրվող պատվո վճարները, ինչպես նաև գիտական կոչման համար տրվող հավելավճարները:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան իսկական և թղթակից անդամներին տրամադրում է ցմահ պատվո վճար, որի չափը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավար-

րության կողմից: Միաժամանակ «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «իզ» կետի համաձայն համախառն եկամտից նվազեցվող եկամուտ են համարվում պետական պարգևները (մրցանակները):

Կարծում ենք, որ նշված պատվո վճարները բնույթով նման են պետական պարգևներին և համապատասխան օրենսդրական փոփոխությամբ կարող են սահմանվել որպես համախառն եկամտից նվազեցվող տարր:

Ինչ վերաբերում է գիտական կոչման համար տրվող հավելավճարներից եկամտահարկ չհաշվարկելուն, ապա այն համարում ենք ոչ նպատակահարմար հետևյալ նկատառումներով`

1) Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի համաձայն աշխատավարձը ներառում է հիմնական աշխատավարձը և գործատուի կողմից աշխատողին իր կատարած աշխատանքի դիմաց ցանկացած եղանակով տրված լրացուցիչ վարձատրությունը.

2) համաձայն «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի` գիտական կազմակերպությունում գիտական աշխատողի վարձատրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված աշխատավարձից, պարգևատրումներից, գիտական աստիճանի համար տրվող լրացուցիչ վարձատրությունից և այլ հավելավճարներից.

3) «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի համաձայն եկամուտ է համարվում աշխատանքի վարձատրությունը և դրան հավասարեցված այլ վճարումները: Միաժամանակ նույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված համախառն եկամտից նվազեցվող եկամուտների կազմում ներառված չեն գիտական աստիճանների համար տրվող հավելավճարները:

Հաշվի առնելով շարադրվածը և այն հանգամանքը, որ հավելավճարները, ըստ էության, համարվում են աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ, գտնում ենք, որ գիտական կոչումների համար տրվող հավելավճարները պետք է հարկվեն ընդհանուր սահմանված կարգով:

Ամփոփելով՝ առաջարկում ենք՝

1) նախագծի առաջին հոդվածից հանել «գիտական կոչման հավելավճարները» բառերը.

2) պատվո վճարների վերաբերյալ լրացումը կատարել «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ հարկ վճարողի համախառն եկամտից նվազեցվող տարրերը սահմանող 9-րդ հոդվածում՝ նույն օրենքի 7-րդ հոդվածի փոխարեն:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Սուրեն Կարայանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ  
Պ-744-27.10.2009-ԳԿ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում  
կատարելու մասին**

**Հոդված 1.** «Եկամտահարկի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-183 Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 7-րդ հոդվածի ա) կետում «վճարվող» բառից հետո լրացնել «պատվովճարները, գիտական կոչման հավելավճարները» բառերը:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

«Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու նպատակն է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատվովճարները, գիտական կոչում ունեցող անձանց տրվող հավելավճարները ազատել եկամտահարկով հարկելուց, քանի որ դրանք եկամուտների հարկման դասական առումով եկամուտ չեն եւ ըստ էության չեն մտնում «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված համախառը եկամուտների թվարկման մեջ: Բացի այդ,

Թեև պատվովճարները ներկայումս սահմանված չեն որպես եկամուտ չհամարվող տարր, սակայն դրանք չեն ենթարկվում հարկման, ինչն արդարացված է նաև վարչարարության իմաստով, իսկ գիտական կոչման համար տրվող հավելավճարները (գիտական աշխատանքներում ներգրավված գիտության թեկնածուների համար այն սահմանված է 10000 դրամ, իսկ դոկտորների համար՝ 20000 դրամ) իրենց փոքր մեծությամբ չեն կարող բավարար համարվել գիտաշխատողի համար եւ այն լրացուցիչ հարկելը չի արդարացնում այն նպատակը, հանուն որի այն տրվում է: Ըստ էության այս վճարները համարվում են ստատուսային: Օրինագիծը համահունչ է նաև ներկայումս գիտության դերի բարձրացմանը միտված պետական ծրագրերին եւ գիտաշխատողների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման վերաբերյալ հայտարարված քաղաքականությանը: